ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ԱՄԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-2020/01 >> ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Արտաշատ <<17>> <<դեկտեմբերի>> 2020թ., ժամը 16.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Թ. Մարգարյան

Անդամներ՝ Գ. Սիմոնյան, Տ. Դերմոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թորոսյան

«ԱՄԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-2020/01 » ծածկագրով գնման ընթացակարգի

հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին

1. Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են ք. Արտաշատ, Մարքսի 13

2. Հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | էլ.փոստ, հեռ.համար |
|---|---|---|---|
| 1. | <<Արմինե Հովհաննիսյան>> ԱՁ | Ք. Արտաշատ, Հ. Թումանյան 7/19 | Arminehovhan78@mail.ru |

3. ա. հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին

- Մասնակցի կողմից ներկայացված ծրարները կազմված են գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

բ. բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

- Մասնակցի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են, ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

գ. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

- մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4. հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

5. Մասնակիցների առաջարկած գինը՝

| N | Ապրանքատեսակ | Նախահաշվային արժեքը | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Սննդի ծանրոց | 3436800 | 3436800 |

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1. «ԱՄԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-2020/01» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <<Արմինե Հովհաննիսյան>> ԱՁ-ին՝ որպես ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝
ա/ Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում:
բ/ Տեղեկագրում հրապարակել նաև իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները:
գ/ Ծանուցել ընտրված մասնակցին, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով, միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 4.1) կամ կանխիկ փողի ձևով և պայմանագրի ապահովում՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով:

2. Պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացրած ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝
ա/ Տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու մասին որոշումը:
բ/ Ընտրված մասնակցին տրամադրել էլեկտրոնային եղանակով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Թ. Մարգարյան

անդամներ՝ Գ. Սիմոնյան

Տ. Դերմոյան

Քարտուղար՝ Ա. Թորոսյան